

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԻՎ 1

2020 թվականի սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12<sup>ա</sup> դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին մասնակցում էին բոլոր ծնողները, դասղեկ Գոհար Ղազարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Նոր 2020-2021 ուսումնական տարվա խնդիրներն ու անելիքները և COVID-19 գահավարակի պայմաններում կիրառվող անհրաժեշտ կանոնների պահպանումը դպրոցական դասընթացում:
2. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին.- «Նոր 2020-2021 ուսումնական տարվա խնդիրներն ու անելիքները և COVID-19 գահավարակի պայմաններում կիրառվող անհրաժեշտ կանոնների պահպանումը դպրոցական դասընթացում» հարցը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթով հանդես եկավ դասղեկ Գոհար Ղազարյանը: Նա շնորհավորեց բոլոր ծնողներին նոր 2020-2021 ուսումնական տարին սկսելու և 12-րդ դասարանի շրջանավարտ ունենալու կապակցությամբ, որից հետո հանգամանալից ներկայացրեց 12-րդ<sup>ա</sup> դասարանի 2020-2021 ուստարվա նոր խնդիրներն ու անելիքները:

«Ինչպես գիտեք, այս տարի ամբողջ հանրապետությունով մեկ ուսումնական տարին կմեկնարկի ոչ թե սեպտեմբերի մեկին՝ գիտելիքի օրը, սովորական ու տոնական առաջին զանգի դողանջով, այլ սեպտեմբերի 14-ին՝ առաջին դասարացիների համար, իսկ 2-12 դասարանցիների համար՝ սեպտեմբերի 15-ին՝ կապված աշխարհում տարածված կորոնավիրուսի՝ համավարակի տարածման, արտակարգ դրության հաստատման և դրանց հետ կապված մի շարք որոշումների իրականացման ժամանակաշրջանի հետ»:

Նա նշեց, որ ավարտվել է դասագրքերի բաժանման գործընթացը, այժմ սկսվել է վարձավճարների հավաքագրումը և մուծումը: 12-րդ դասարանի բոլոր աշակերտներն ապահովված են դասագրքերով և դպրոցական անհրաժեշտ պարագաներով:

Տեղեկացվեց, որ այս կիսամյակում դասերն սկսվելու են ժամը 9-00-ին և ավարտվելու են 13-55: Կան փոփոխություններ. դպրոցական ռեժիմի մասնակիորեն փոխվել է. կրճատվել է երկար դասամիջոցների տևողությունը (բոլոր դասամիջոցները 5 րոպե):

Դասարանի աշակերտները բաժանվել են 2 խմբի և դասի են գալու հերթով, շաբաթը 3 օր, մեկընդմեջ: Մնացած 3 օրը, մնալով տանը, կատարելու են ինքնուրույն աշխատանքներ: Այդ պատճառով խտացվել են ուսումնական ծրագրերը և 1-ին կիսամյակը տևելու է 13 ուսումնական շաբաթ՝ սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 28-ը: Այս բոլորն ստեղծում են դժվարություններ, որոնք պիտի հաղթահարվեն ուսուցիչ-ծնող-աշակերտ եռակողմ միասնական ուժերով:

Սահմանափակվել են արտադասարանական խմբակների պարապմունքները և ներդպրոցական միջոցառումները, որպեսզի բացառվի խմբակային շփումը միմյանց հետ: Ամեն օր՝ առավոտյան՝ դպրոց մտնելուց առաջ բոլոր աշակերտները պիտի

ջերմաչափվեն, ստուգվեն նրանց կողմից դիմակների կրումը և ախտահանիչ նյութերի օգտագործումը, իրարից 1,5-2 մ հեռավորություն պահպանելը, և դա վերահսկվելու է ամբողջ օրվա ընթացքում:

12-րդ դասարանցիները, լինելով ավարտական դասարանի աշակերտներ, պարտավոր են այս վերջին ուստարում լինել ավելի խելամիտ ու հավասարակշռված, չունենան անհարգելի ուշացումներ ու բացակայություններ, դասերին միշտ ներկայանան պատրաստ վիճակում, որովհետև շատ կարևոր են 1-ին կիսամյակի գնահատականները, լրջորեն պատրաստվեն թեմատիկ ու կիսամյակային գրավոր աշխատանքներին և լավ նախապատրաստվեն քննություններին:

Որոշեցին.- 12-րդ դասարանի աշակերտներին իրագեկել COVID-19 գահավարակի պայմաններում դպրոցական դասընթացում կիրառվող անհրաժեշտ կանոնները, դրանց ամենօրյա կիրառման ու պահպանման վերաբերյալ անհրաժեշտ ցուցումները, օգնել միմյանց, դասղեկին, ծնողներին այս դժվարին փուլը հաղթահարելու գործում:

2. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի անդամների և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

12-րդ դասարանի ղեկավարը նշեց, որ նոր ուսումնական տարում ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Այս տարի ծնողական խորհուրդն ավելի շատ անելիքներ ունի. ակտիվ ու հետևողական աշխատանք պիտի կատարի, որովհետև մեծ է նրա դերը դպրոցում վերջին ուստարում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ՝ հետևյալ կազմով՝

1. Մկրտչյան	Թագուհի	նախագահ
2. Բաբայան	Տաթևիկ	անդամ
3. Հովհաննիսյան	Անուշ	անդամ
4. Ծառուկյան	Նունուֆար	անդամ
5. Հովհաննիսյան	Լիլիթ	անդամ

Քվեարկության արդյունքում ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Մկրտչյան Թագուհին:

Որոշեցին.- Ավելի ակտիվացնել աշխատանքները, պատասխանատվությամբ կատարել իրենց վստահված աշխատանքը, օգնել դասղեկին ու դպրոցին ուսման որակն ու կարգապահությունը բարձր հիմքերի վրա գնելու համար:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր:

Ելույթ ունեցան նաև ծնողներ, որոնք տարբեր առաջարկություններ արեցին 12-րդ դասարանում սովորող իրենց երեխաների հաճախումների, դասագրքերի գործածման, աշակերտին վայել կեցվածքով դպրոց հաճախելու և այլ հարցերի վերաբերյալ:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին ներկայանան պատրաստ վիճակով, բարեխղճորեն կատարեն իրենց վերջին դպրոցական տարվա պարտականությունները, հետևեն COVID-19 գահավարակի պայմաններում դպրոցական դասընթացում կիրառվող անհրաժեշտ կանոններին, օգնեն միմյանց, դասդեկին՝ այս կարևոր փուլը հաղթահարելու գործում:

Ժողովի նախագահ՝  
Քարտուղար՝

*Արմինե  
Ասլ*

*Խաչատրյան  
Մարտիրոս*

*Եղիշյան  
Քարապետ*